Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
մայիսի 10-ի նիստի N 18
արձանագրային որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2011 թվականի ընթացքում՝ հիմք ընդունելով ՀՀ Վարչապետի 2011 թվականի փետրվարի 9-ի N 92-Ա որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2011 թվականի ծրագիրը”, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչությունն (այսուհետ՝ Տեսչություն) իրականացրել է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տնտեսվարող սուբյեկտների կողմից բյուջեի եկամուտների ձևավորմանն ու ծախսերի (ն/թ ֆինանսական ծրագրեր, գնումների գործընթաց) իրականացմանն ուղղված գործունեության, հաշվապահական հաշվառման վարման և բյուջեի կատարման մասին հաշվետվությունների կազմման և ներկայացման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության, արտաբյուջետային միջոցների գոյացման ու օգտագործման ճշտության ստուգումներ, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատանքների գնահատում: Իրականացված ստուգումներով ընդգրկվել են նաև պետական և պետական

մասնակցության ընկերություններում ՀՀ պետական բյուջեից գումարների հատկացման և ծախսման ճշտության հարցերը, ինչպես նաև շահութաբաժինների հաշվարկման ճշտության և ժամանակին ՀՀ պետական բյուջե վճարման, ինչպես նաև զուտ շահույթի բաշխման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

Տեսչությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվել է “Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին” ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 11-ի թիվ 1112-Ն որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հսկողության կարգ”-ով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2010թ. օգոստոսի 19-ի թիվ 1146-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության կանոնադրությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչության կողմից ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ Վարչապետի հանձնարարականների հիման վրա, որոնք միտում են ունեցել բացահայտել տնտեսության առանձին ոլորտներում առկա հիմնախնդիրները և գտնել դրանց լուծման լավագույն ուղիները՝ պետական ռեսուրսների օպտիմալ օգտագործման պայմաններում:

Բացի վերը նշված ծրագրային և հատուկ հանձնարարականներով իրականացված ստուգումներից ՀՀ իրավապահ մարմինների հետ համագործակցության շրջանակներում վերջիններիս պահանջով և առաջադրած հարցերի շրջանակներում պետական և մասնավոր կազմակերպություններում իրականացվել են համապատասխան ստուգումներ և տրամադրվել մասնագիտական եզրակացություններ:

II. 2011 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել և ամփոփվել են ՀՀ Վարչապետի 2011 թվականի փետրվարի 9-ի N 92-Ա որոշմամբ հաստատված "Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2011 թվականի ծրագրով" իրականացված թվով 22 ստուգումներ, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության թվով 17 տուն-ինտերնատներում, գիշերօթիկ հաստատություններում, մանկատներում ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության թվով 51 տարածքային բաժիններում՝ հանդիպակաց ստուգումներ:
- ՀՀ իրավապահ մարմինների 2011թ. ներկայացված պահանջով հաշվետու ժամանակահատվածում (հիմնականում 4-րդ եռամսյակում) ավարտվել և ամփոփվել են համապատասխանաբար թվով 11 ստուգումների արդյունքներ և թվով 1 ստուգում տարեվերջին գտնվել է ընթացքում:

- ՀՀ Վարչապետի հանձնարարականի հիման վրա իրականացվել են թվով 11 ստուգումներ:

Ընդհանուր առմամբ 2011թվականի ընթացքում Տեսչության կողմից իրականացվել և ամփոփվել են թվով 112 ստուգումներ, որից մեկը սկսվել էր դեռևս 2010թ. դեկտեմբերից: Կից՝ ներկայացվում է 2011 թվականի օգոստոսի 6-ից մինչև դեկտեմբերի 30-ը իրականացված ստուգումների վերաբերյալ Հաշվետվությունը՝ 29.12.2011թ. թիվ 1905-Ն որոշմամբ հաստատված ձևաչափով:

- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել նախորդ ժամանակահատվածում ստուգումներով արձանագրված գումարների վերականգնման և/կամ վերաձևակերպման ցուցանիշների բարելավման ուղղությամբ, հսկողություն է իրականացվել արձանագրված խախտումների, թերությունների և բացթողումների վերացման նպատակով համապատասխան մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ:

Արդյունքում, Տեսչության կողմից 2011 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներով 2008-2011թթ. արձանագրված գումարներից վերականգնվել է 9,070,009.4 հազ. դրամ և վերաձևակերպվել 2,316,760.7 հազ. դրամ, ընդամենը՝ 11,386,770.1 հազ. դրամ:

Վերականգնված գումարից 565,517.0 հազ. դրամը վերականգնվել է բյուջե, 8,491,601.2 հազ. դրամը պակասեցվել է ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորման ենթակա գումարներից, 12,891.2 հազ. դրամը վերականգնվել է կազմակերպությունների հաշվին: Վերաձևակերպված 2,316,760.7 հազ. դրամի մի մասն իրենից ներկայացնում է կազմակերպություններում հաշվապահական հաշվառմամբ անհիմն ձևակերպված վնասների կրճատում և ճշգրտում, իսկ մյուս մասը՝ հաշվետվություններում չձևակերպված ապրանքանյութական արժեքներ, որոնք ստուգումների արդյունքներով ձևակերպվել են հաշվապահական հաշվեկշիռներում:

	Վերականգնվել կամ վերաձևակերպվել է				
	Ընդամենը	Վերականգնվել է բյուջե	Պակասեցվել է ֆինանսավորումից	Վերականգնվել է կազմակերպության հաշվին	Հաշվառումով վերաձևակերպվել է
	(հազ. դրամ)				
1	2	3	4	5	6
ԸՆԴԱՄԵՆԸ 2011Թ.	11,386,770.1	565,517.0	8,491,601.2	12,891.2	2,316,760.7
այդ թվում					
Ընդամենը 1-ին եռամսյակում	304,113.9	85,484.6	218,622.8	6.5	-
Ընդամենը 2-րդ եռամսյակում	2,169,246.8	169,547.2	-	1,706.2	1,997,993.4
Ընդամենը 3-րդ եռամսյակում	22,706.0	22,706.0	-	-	-
Ընդամենը 4-րդ եռամսյակում	8,890,703.4	287,779.2	8,272,978.4	11,178.5	318,767.3

Մանրամասնելով, պետք է նշել, որ հսկողության արդյունքների հիման վրա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա գումարը պակասեցվել է և կազմակերպությունները 2011թ. ընթացքում չեն ֆինանսավորվել 8,491.6 մլն դրամի չափով: Բյուջե վերականգնված 565.5 մլն դրամից կանխիկ վերականգնումները կազմել են 254.8 մլն դրամ, աշխատանքներով վերականգնումները՝ 53.6 մլն դրամ, պետական բյուջեի հաշվին հարկային մարմինների գծով գրանցված պարտավորությունները՝ 257.1 մլն դրամ:

- Հաշվետու ժամանակահատվածում, բացի վերը նշված աշխատանքներից, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցը մասնակցել է մի շարք պետական և պետական մասնակցությամբ կազմակերպությունների լուծարային հանձնաժողովների

աշխատանքներին՝ ընդգրկվելով նշված հանձնաժողովներում որպես ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացնող անդամ:

Հաշվետու ժամանակաշրջանում լուծարային հանձնաժողովների աշխատանքների արդյունքում լուծարվել են թվով 62 կազմակերպություններ, իսկ լուծարային գործընթացում գտնվող թվով 14 կազմակերպություններ ճանաչվել են սնանկ դատարանի կողմից կայացրած համապատասխան որոշումների համաձայն: Բազմաթիվ կազմակերպությունների լուծարային գործընթացները դեռևս ընթանում են:

III. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Ինչպես վերը նշվեց, 2011 թվականի ընթացքում ՀՀ Վարչապետի 2011 թվականի փետրվարի 9-ի N 92-Ա որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2011 թվականի ծրագրով” իրականացվել է թվով 22 ստուգում և դրանց հանդիպակաց թվով 68 ստուգում: Իրականացված ստուգումներով արձանագրված գումարների վերականգնման կամ վերաձևակերպման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակում (առավել մանրամասն՝ կից հավելված 1-ում).

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԻՄՔԸ	Արձանագրվել է	Ենթակա է վերականգնման կամ վերաձևակերպման	Վերականգնվել կամ վերաձևակերպվել է
	(հազ.դրամ)		
1	*2*	*3*	*4*
2011թ. ծրագիր	**14,672,469.4 ***	**11,691,793.1**	**8,323,616.4**

****14,672,469.4** հազ.դրամից **13,034,785.4** հազ. դրամը բաժին է ընկնում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունում՝ (այդ թվում՝ **51** տարածքային բաժիններում) իրականացված ստուգումներին:*

Իրականացված ծրագրային ստուգումներով ընդհանուր առմամբ ընդգրկվել են թվով **4** նախարարություններ, դրանց ենթակայության կազմակերպություններ, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ենթակայության թվով **2** հարկային և թվով **1** մաքսային մարմիններ: Ստուգումներ են իրականացվել նաև ՀՀ մարզերում՝ ընդգրկելով թվով **2** մարզպետարաններ և թվով **4** քաղաքային համայնքներ :

ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2011թ. ծրագրով թվով 1 կազմակերպությունում /ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության թվով 51 տարածքային բաժիններում/ իրականացված ստուգումների արդյունքները ներկայացվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

Վերը նշված գործի և Տեսչության կողմից ՀՀ գլխավոր դատախազությանը հանձնված այլ ստուգումների մասով իրականացված ուսումնասիրությունների արդյունքում 2011թ. ընթացքում դատարան է ներկայացվել թվով 38 հայցադիմում, հարուցվել է 32 քրեական գործ:

2011թ. ծրագրով նախատեսված ստուգումներից չեն իրականացվել թվով 3-ը: Այսպես.

- Համաձայն ՀՀ Վարչապետի 06.07.2011թ. “Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2011 թվականի փետրվարի 9-ի N 92-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին” N 626-Ա որոշման, չեղյալ են ճանաչվել ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2011 թվականի ծրագրով նախատեսված թվով 2 ստուգումներ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության “Նորք տեղեկատվական վերլուծական կենտրոն” ՓԲԸ-ում և “ՀՀ զբաղվածության ծառայություն”գործակալությունում:

- Համաձայն ՀՀ Վարչապետի 27.12.2011թ. “Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2011 թվականի փետրվարի 9-ի N 92-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին” N 1263-Ա որոշման, չեղյալ են ճանաչվել ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2011 թվականի ծրագրով նախատեսված թվով 1 ստուգում՝ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամում:

Ծրագրային ստուգումներով բացահայտված խախտումներ և թերություններ, դրանց վերացման գծով Տեսչության կողմից տրված առաջարկներ

Ծրագրային ստուգումների համատեքստում անդրադարձ կատարենք Տեսչության կողմից պետական մարմիններում և/կամ դրանց ենթակայության համակարգերում իրականացված առանձին ստուգումների, որոնց ընթացքում արձանագրվել են.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

1. ՀՀ պետական բյուջեով <<Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ>>, <<Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ>>, <<Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ>> և <<Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայություններ>> ծրագրերով նախատեսված միջոցների շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և նշված ծրագրերն իրականացնող ՊՈԱԿ-ների միջև կնքված պայմանագրերում պայմանագրային գումարը հաշվարկելիս հաշվի չեն առնվել նախորդ տարիների շահառուների (շահառու/օրերի թիվ) փաստացի թիվը, ինչպես նաև մատուցվելիք ծառայության հաստատուն ծախսերի գծով նվազագույն տարեկան շահավետ գինը որոշելիս հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և հաշվարկվել են պահանջվածից ավել գումարներ, որի արդյունքում ավել են սահմանվել

պայմանագրային գումարներն ու ՀՀ պետական բյուջեից հատկացվելիք սուբսիդիայի գումարը: Ավել նախատեսված գումարները կամ ՀՀ պետական բյուջեից չեն ֆինանսավորվել, կամ էլ նախահաշվում հոդվածային փոփոխություններ կատարելու միջոցով ուղղվել են այլ հոդվածով տարեսկզբին չնախատեսված ծախսերի կատարմանը: Հաշվի առնելով նշվածը առաջարկվել է վերոհիշյալ ծրագրերով 2011թ. համար նախատեսված ծախսերը նվազեցնել 86712.4 հազ. դրամով:

2. Նախարարության ենթակայության առանձին ՊՈԱԿ-ների կողմից անտեսվել է ՀՀ կառավարության 09.04.2009թ. <<ՀՀ տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՊՈԱԿ-ների հետ կնքված ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ՊՈԱԿ-ներին տրվող սուբսիդիաների հիմքում դրվող ծախսերը տարբերակելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 31.08.2006թ. թիվ 1308-ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 382-Ն որոշմամբ հաստատված Կարգի պահանջները և ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների դրամական միջոցների մնացորդները գումարով 3124.7 հազ. դրամ հետ չեն փոխանցվել պետական բյուջե:

3. Նախարարության աշխատակազմի պահպանում ծրագրով պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ հոդվածով ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման ժամանակ հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և նախատեսվել են պահանջվածից ավելի գումարներ: Ավել նախատեսումների արդյունքում տնտեսված միջոցները տարվա ընթացքում հոդվածային տեղաշարժերի միջոցով ուղղվել են այլ ծախսային հոդվածներով տարեսկզբի նախահաշվի համեմատ ավել կատարված ծախսերի ֆինանսավորմանը: Հաշվի առնելով նշված հոդվածով փաստացի ծախսերի տնտեսումները, առաջարկվել է 2011թ. համար նախատեսված ծախսերը նվազեցնել 4465.9 հազ. դրամով:

4. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված գումարների հաշվին վետերանների հանգստի և վերականգնողական բուժումը կազմակերպելու համար ՀԿԽԸ Գրացիա ՄՎԿ ՍՊԸ-ին ավել է ֆինանսավորվել 150 հազ. դրամ:

5. <<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանների տրամադրում>> և <<ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին բնակարանների, կահույքի, կենցաղային սարքերի և սարքավորումների տրամադրում ծրագրերով 2009թ. մարտ ամսին ձեռք բերված երկու բնակարանները ընդամենը գումարով 8655.0 հազ.դրամ նպատակին չեն ծառայում՝ ձեռք բերման պահից անցել է ավելի քան 2 տարի, սակայն որևէ մանկատան շրջանավարտի չեն տրամադրվել:

6. Թույլ են տրվել <<Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ>> ծրագրով 57096.9 հազ. դրամի (կատարող <<Հույսի կամուրջ>> ՀԿ), <<Այլ օբյեկտների հիմնանորոգում>> և <<Այլ օբյեկտների շինարարություն>> ծրագրերով 4076.5 հազ. դրամի, <<Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ>> ծրագրով՝ 415.4 հազ. դրամի, <<Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ>> ծրագրով՝ 131.1 հազ. դրամի՝ ընդամենը 61719.9 հազ. դրամի հավելագրումներ:

7. Առանձին բյուջետային ծրագրերով ՀՀ 2011թ. պետական բյուջեում գումարների նախատեսման ժամանակ հաշվի չեն առնվել տարեսկզբին առկա պահեստավորված միջոցների, դեբիտորական պարտքերի մնացորդները, ինչպես նաև նախորդ տարիների փաստացի ծախսը: Հաշվի առնելով նշված հանգամանքը և ընթացիկ տարում կնքված պայմանագրերը, ՀՀ 2011թ. պետական բյուջեում ավել նախատեսումները կազմում են ընդամենը 65398.0 հազ. դրամ, այդ թվում՝ <<Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ>> ծրագրով 29006.2 հազ. դրամ, <<Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում>> ծրագրով՝ 26216.8 հազ դրամ, <<Մարդասիրական օգնության կարգով ստացվող պարենամթերքի բաշխման

ծառայությունների ձեռքբերում>> ծրագրով 9071.4 հազ. դրամ, <<Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում>> ծրագրով 1103.6 հազ. դրամ:

8. Արձանագրվել է ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված անձանց պետական պատվերի շրջանակներում անվճար ծառայություններ մատուցելու դեպքեր՝ ընդամենը 2302.5 հազ. դրամի, այդ թվում՝ <<Հաշմանդամների պրոթեզաօրթոպետիկ պարագաներով վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերականգնում>> ծրագրով՝ 2050.0 հազ. դրամի և <<Բժշկա-սոցիալական վերականգնման աշխատունակության փորձաքննության ծառայություններ>> ծրագրով՝ 252.5 հազ դրամի:

Առաջարկվել է .

1. ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների շահառուների թիվը ու հաստատուն ծախսերի փաստացի մակարդակը, թույլ չտալ ավել նախատեսումների դեպքեր:

2. Ապահովել վերականգման ենթակա գումարների մուտքը ՀՀ պետական բյուջե:

3. Հնարավոր սեղմ ժամկետում ապահովել <<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանների տրամադրում>> և <<ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին բնակարանների, կահույքի, կենցաղային սարքերի և սարքավորումների տրամադրում>> ծրագրերով ձեռք բերված բնակարանների տրամադրումը մանկատան կարիքավոր շրջանավարտներին:

4. Քննարկել <<Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ>> ծրագրով <<Սթրես կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից մատուցվող հիվանդանոցային բժշկական օգնության միջինացված գների վերանայման (նվազեցման) հարցը՝ հաշվի առնելով ՀՀ

առողջապահության նախարարության համակարգի ընկերությունների համար սահմանված գների մակարդակը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայություն

1. 2008-2011թթ. Պետական բյուջեներում <<Ապահովագրական կենսաթոշակներ>>, <<Սոցիալական կենսաթոշակներ>> ծրագրերով գումարների նախատեսման համար բյուջետային հայտերում, ինչպես նաև 2010թ. նոյեմբերի 1-ից բազային կենսաթոշակի բարձրացման հետ կապված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից անհրաժեշտ դրամական միջոցների պահանջի հաշվարկներում հիմք ընդունած կենսաթոշակառուների թվի մեջ ներառվել է նաեւ այն կենսաթոշակառուների թիվը, որոնք տարիներ շարունակ կենսաթոշակ չեն ստացել (ՀՀ-ից բացակայելու պատճառով կամ մահացել են, սակայն մահվան վկայական չներկայացնելու ու թաղման նպաստ չստանալու հետևանքով բազաներից չեն հանվել), դրանցից 16124-ը առնվազն 3 տարի անընդմեջ կենսաթոշակ չեն ստացել: Բյուջետային հայտերում առանձին ծրագրերով ավել է ներկայացվել կենսաթոշակի միջին ամսական չափն ու կենսաթոշակառուների իրական թիվը: Նշված փաստը հանգեցրել է պահանջի անհիմն ավելացման, որը կամ ծրագրային տեղաշարժ կատարելու արդյունքում ուղղվել է այլ ծրագրերի ֆինանսավորմանը կամ էլ ՀՀ պետական բյուջեից չի ֆինանսավորվել:

Վերոհիշյալի արդյունքում ՀՀ 2011թ պետական բյուջեում ավել նախատեսումները կազմել են 8053.0 մլն. դրամ, այդ թվում՝ <<Ապահովագրական կենսաթոշակներ>> ծրագրով՝ 5711.7 մլն. դրամ, <<Սոցիալական կենսաթոշակներ>> ծրագրով՝ 828.6 մլն. դրամ, <<Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ>> ծրագրով 1009.0 մլն. դրամ, <<Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ>> ծրագրով 231.7 մլն. դրամ, <<ՀՄ պատերազմի վետերաններին 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված պատճառներով

հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայող ընտանիքներին դրամական օգնության տրամադրում>> ծրագրով՝ 272.0 մլն.դրամ:

2. <<*Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում>> ծրագրով* նախորդ տարիների փաստացի ծախսը հաշվի չառնելու արդյունքում ավել ֆինանսավորում է նախատեսվել 30078.6 հազ դրամ, անտեսվել է ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 17-ի <<ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին>> թիվ 194-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և ծառայողական ավտոմեքենաներ են հատկացվել կառավարության որոշմամբ չնախատեսված թվով 8 պաշտոնատար անձանց, այդ թվում՝ ծառայության պետի թվով 3 խորհրդականների, ֆինանսաբյուջետային վարչության պետին, իրավաբանական և անձնակազմի կառավարման վարչության պետին, տեղեկատվական և վերլուծությունների վարչության պետին, սոցիալական ապահովության վարչության պետին, հաշվապահական հաշվառման բաժնին: Ոչ բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերով ընդամենը ավել է վճարվել 1309.3 հազ.դրամ:

3. Խախտելով <<ՀՀ 2009թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջները, ծառայության պետի հրամանով ծառայության <<Վճարումների ծառայություն>> ստորաբաժանման կողմից կատարված վճարումների վարձավճարները գումարով 441.0 մլն. դրամ ֆինանսավորվել են <<Ապահովագրական կենսաթոշակներ>> ծրագրով՝ 414.7 մլն. դրամ, <<Սոցիալական կենսաթոշակներ>> ծրագրով՝ 15.0 մլն. դրամ, <<Շարքային զինծառայողների կենսաթոշակներ>> ծրագրով՝ 5.1 մլն. դրամ, <<Պատերազմի վետերանների պատվովճար>> ծրագրով՝ 3.4 մլն. դրամ, <<ՀՄ պատրերազմի վետերաններին զինծառայող ընտանիքներին դրամական օգնության տրամադրում>> ծրագրով՝ 1.5 մլն. դրամ, և թվով 3 այլ ծրագրերի գծով 1.3 մլն. դրամ: Նշված

վճարումները վերը նշված ծրագրերի հաշվին կատարվել են այն դեպքում, երբ ՀՀ 2009թ. պետական բյուջեով կենսաթոշակային ապահովության և ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների մատուցման համար նախատեսված է եղել առանձին ծրագիր, որի գծով 2009թ. գոյացել է 762.5 մլն. դրամի տնտեսում:

Անտեսվել է <<Գանձապետական համակարգի մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջները (համաձայն որի ՀՀ պետական հիմնարկները առևտրային բանկերում չեն կարող ունենալ բանկային հաշիվներ) և <<Վճարումների ծառայություն>> ստորաբաժանման համար առևտրային բանկում բացվել է առանձին հաշվարկային հաշիվ, որտեղից էլ կատարվել են ծառայության պահպանման համար բանկային գործարքներ:

4. Առանձին ամիսների վճարումը պայմանագրով սահմանված ժամկետում ավարտելուց հետո մնացորդ գումարը ծառայությանը սահմանված ժամկետին հետ չվերադարձնելու համար ստուգող խմբի կողմից կատարված հաշվարկների համաձայն չհաշվարկված տույժի գումարը կազմում է <<Հայփոստ>> ՓԲԸ-ի հանդեպ 509816.9 հազ. դրամ, և <<Հայխնայբանկ>> ՓԲԸ՝ ներկայումս <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ հանդեպ 3017.6 հազ. դրամ:

5. Խախտվել են ՀՀ կառավարության 2003թ մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշմամբ հաստատված <Կենսաթոշակ նշանակելու համար ապահովագրական ստաժը հաշվարկելու, դրանում աշխատանքային կամ այլ բնույթի գործունեության առանձին տեսակներ հաշվառելու> կարգի 24-րդ կետի պահանջները եւ կենսաթոշակ է նշանակվել թոիչքահրամանատարական անձնակազմի համար թոիչքային ժամերի և ստաժի վերաբերյալ ոչ արժանահավատ տեղեկանքների և թոիչքային գրքույկների հիման վրա, որոնք հանգեցրել են կենսաթոշակի ամսական չափը հասանելիքից ավել սահմանելուն եւ վճարելուն:

6. Խախտվել են ՀՀ կառավարության 2003 թ.մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշմամբ հաստատված <<<<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքով կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու>>կարգի 2-րդ կետի պահանջները և կենսաթոշակ է նշանակվել առանց անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու:

7. Խախտելով՝ <Պետական կենսաթոշակի մասին> ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի պահանջները կենսաթոշակի վճարումներ են կատարվել ժամկետանց լիազորագրերի հիման վրա:

8. Խախտելով <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները կենսաթոշակառուների մահվանից հետո կենսաթոշակի վճարումը դադարեցնելու փոխարեն հաշվարկվել և սոցիալական ապահովության պետական ծառայության վճարումների ծառայության միջոցով կատարվել է կենսաթոշակների վճարումներ:

9. Ծառայության կողմից չի ապահովվել <<Պետական կենսաթոշակների մասին>> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի պահանջները եւ կենսաթոշակների վերահաշվարկ է կատարվել առանց հաշվի առնելու օրենքով սահմանված ժամկետները եւ կենսաթոշակառուի կողմից առնվազն վեց ամիս աշխատած լինելու հանգամանքը:

10. Առանձին դեպքերում խախտվել են <Պետական կենսաթոշակների մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի, 60-րդ հոդվածի 2-րդ կետի եւ ՀՀ կառավարության 2003թ մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշմամբ հաստատված <<<<Պետական կենսաթոշակների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու,

կենսաթոշակ վճարելու եւ կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու>> կարգի 21-րդ կետի պահանջները եւ կենսաթոշակառուների ՀՀ-ից բացակայելու եւ տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չստանալու դեպքերում կենսաթոշակի վճարումները դադարեցնելու փոխարեն կատարվել են կենսաթոշակի անհիմն վճարումներ՝ անհայտ անձանց:

11. Առանձին դեպքերում կենսաթոշակների դեպոնենտագրված գումարների վճարումները կատարվել են կենսաթոշակառուների կողմից ներկայացված դիմումներում առկա ստորագրությունների եւ կենսաթոշակառուների գործերում առկա ստորագրությունների անհամապատասխանության պայմաններում:

12. Առանձին դեպքերում մահացած կենսաթոշակառուների հուղարկավորության հետ կապված ծախսերի փոխհատուցման (թաղման նպաստի վճարման) հարցերը կանոնակարգող օրենսդրական ակտերի դրույթները ճիշտ չմեկնաբանելու եւ ճիշտ չկիրառելու արդյունքում թաղման նպաստները վճարվել են հասանելիքից ավել չափերով՝ փոխհատուցումը տրվել է դիմում ներկայացնելու օրվա դրությամբ գործող հիմնական կենսաթոշակի 25-ապատիկի չափով, մահվան (թաղման) օրվա դրությամբ գործող հիմնական կենսաթոշակի մեծության 25-ապատիկի չափով տալու փոխարեն:

Առաջարկվել է.

1. ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման, ինչպես նաև ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից գումարների հատկացման համար ներկայացվող հայտերը հիմնավորել ճշգրիտ հաշվարկներով, թույլ չտալ բյուջետային միջոցների անհիմն

պահանջներ ներկայացնելու դեպքեր: Նշված երեւույթի վերացման եւ կենսաթոշակների վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցների իրական ծավալների ճշգրիտ որոշման և ավել նախատեսումների փաստերը բացառելու նպատակով ներդնել կենտրոնացված տեղեկատվական համակարգ և հնարավոր սեղմ ժամկետում վերջինիս միջոցով ճշտել ու բազաներից հանել (առանձին հաշվառել) այն կենսաթոշակառուների թիվը, որոնք տարիներ շարունակ կենսաթոշակ չեն ստացել՝ ՀՀ-ից բացակայելու պատճառով կամ մահացել են, սակայն մահվան վկայական չներկայացնելու ու թաղման նպաստ չստանալու հետևանքով բազաներից չեն հանվել:

Հետագայում նշված կենսաթոշակառուների վերադառնալու եւ չստացած կենսաթոշակի գումարները ստանալու պահանջ ներկայացնելու դեպքում վերջիններիս հասանելիք գումարները վճարել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին, նախապես ստուգելով դրանց արժանահավատության փաստը:

2. ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսված գումարներից պակասեցնել արձանագրված պակասեցման ենթակա գումարները:

3. Հնարավորին սեղմ ժամկետում սոցիալական ապահովության պետական ծառայության եւ <ՎՏԲ Հայաստան բանկ> ՓԲԸ պատասխանատու պաշտոնատար անձանցից կազմել համապատասխան աշխատանքային խումբ եւ ծառայությունում ու <ՎՏԲ Հայաստան բանկ> ՓԲԸ-ում առկա փաստաթղթերի հիման վրա պարզել 2008 հոկտեմբեր-դեկտեմբեր եւ 2009թ հունվար - փետրվար ամիսներին <ՎՏԲ Հայաստան բանկ> ՓԲԸ կողմից կենսաթոշակառուներին չվճարված կենսաթոշակի գումարներից ետ վերադարձման ենթակա գումարների մեծությունը, կազմել համապատասխան փոխադարձ հաշվարկների ակտ եւ տարբերություն առաջանալու դեպքում ապահովել վերջինիս վերադարձը ՀՀ պետական բյուջե:

4. ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծրագրերն իրականացնել <<ՀՀ պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի շրջանակներում, յուրաքանչյուր տարվա համար նախատեսված բյուջետային ծրագրերին համապատասխան, թույլ չտալ ծառայության

պետի անհիմն հրամանով օրենքով նախատեսված բյուջետային ծախսերի հաշվին այլ բյուջետային ծրագրերի ֆինանսավորումներ:

5. Ապահովել <<Հայփոստ>> ՓԲԸ-ից 509816.9 հազ. դրամ և <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ –ից 3017.6 հազ. դրամ տույժի գումարների գանձումը և վճարումը ՀՀ պետական բյուջե:

6. ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 17-ի <<ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին>> թիվ 194-Ն որոշմամբ հաստատված <<Սահմանաքանակ ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների>> (հավելված 2) համապատասխան փոփոխություն կատարել և ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը թվով 8 ծառայողական ավտոմեքենայով կրճատել՝ համապատասխանաբար կրճատելով ՀՀ 2011թ. պետական բյուջեով նշված ավտոմեքենաների պահպանման համար նախատեսված ծախսերը 9600.0 հազ. դրամով: Միաժամանկ քննարկել ծառայության տարածքային բաժիններին ամրակցված թվով 28 ծառայողական ավտոմեքենաների հետագա պահպանման նպատակահարմարության հարցը: Սահմանված կարգով լուծել նշված ավտոմեքենաների օտարման (իրացման) հարցը և իրացումից առաջացած գումարները մուտքագրել ՀՀ պետական բյուջե:

7. Ապահովել ոչ բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերով ընդամենը ավել վճարված 1309.3 հազ.դրամի վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

8. Կենսաթոշակների նշանակման, հաշվարկման և վճարման հարցերը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու և ստուգմամբ արձանագրված խախտման փաստերը բացառելու նպատակով ձեռնարկել հետևյալ միջոցառումները .

- Հաշմանդամության ժամկետները լրանալու եւ հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը բաց թողնելու պայմաններում կենսաթոշակի վճարումները կասեցման օրվանից վերսկսելու, ինչպես նաեւ մահացած կենսաթոշակառուների մահվանը հաջորդող ամիսների համար կենսաթոշակների

հաշվարկման եւ վճարման պրակտիկան վերացնելու ուղղությամբ ձեռնարկել համապատասխան քայլեր:

-Կենսաթոշակների նշանակումները և վերահաշվարկները իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին խիստ համապատասխան՝ բացառապես հիմնավոր փաստաթղթերի առկայության պայմաններում:

- Օդաչուների կենսաթոշակների նշանակումը իրականացնել հիմնավոր փաստաթղթերի եւ օրենսդրության պահանջներին խիստ համապատասխան, բացառելով հասանելիք կենսաթոշակներից ավել նշանակման եւ վճարման փաստերը:

- Լիազորագրերի հիման վրա կենսաթոշակների վճարումները կատարել լիազորագրով սահմանված ժամկետներում, բացառելով սահմանված ժամկետից դուրս վճարումների իրականացումը :

- Այսուհետ մահացած կենսաթոշակառուների գծով տեղեկատվությունը ստանալուն պես կենսաթոշակի հաշվարկման գործընթացը դադարեցնել և կենսաթոշակառուների հաշվառման բազայում կատարել համապատասխան ճշտում:

Ձեռնարկել բավարար և անհրաժեշտ միջոցներ ստուգմամբ արձանագրված անհիմն վճարված գումարները ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

1. ***<<Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում>> ծրագրով*** ծախսերի նախահաշիվներում գումարների նախատեսման ընթացքում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման առանձին հոդվածների գծով հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը ու պահեստավորված միջոցների մնացորդները և նախատեսվել են պահանջվելիքից ավել գումարներ՝ ընդամենը ***28640.9 հազ. դրամի:***

2. <<Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի ծառայություններ>> ծրագրով <<Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից *ջրի ծախսի չափումները հաշվետվությամբ ավել ցույց տալու արդյունքում պետական բյուջեից ավել է ծախսագրվել* ***915.2 հազ. դրամ:***

3. <<Արևիկ ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ>> ծրագրով <<Արևիկ ազգային պարկ>> ՊՈԱԿ-ին փաստացի ծախսերի համեմատ 2010թ-ին ՀՀ պետական բյուջեից ավել է հատկացվել 243.0 հազ. դրամ:

4. <<Բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին սուբվենցիաների տրամադրում>> ծրագրով Քաջարանի քաղաքապետարանը 2010թ ՀՀ պետական բյուջեից հատկացված սուբվենցիայի չօգտագործված գումարը՝ 30283.5 հազ. դրամը ՀՀ պետական բյուջե չի վերադարձրել, նշված գումարից 13429.4 հազ. դրամը չի ծախսվել նաև 2011թ.-ին: Արարատի քաղաքապետարանին 2009թ ՀՀ պետական բյուջեից հատկացված սուբվենցիայից 4884.7 հազ. դրամը ծախսվել է ոչ նպատակային՝ ծախսվել է բնապահպանական ծրագրով չնախատեսված միջոցառումների իրականացման համար՝ ձեռք է բերվել 1 հատ ԳԱԶԵԼ մակնիշի միկրոավտոբուս:

5. <<Ջրային պետական կադաստրի տեխնիկական իրականացման>> ծրագով <<Գեոկոմ>> ՍՊԸ-ի հանդեպ չի հաշվարկվել աշխատանքների կատարումը պայմանագրով նախատեսված ժամկետից ուշ կատարելու դիմաց տույժ գումարով 136.7 հազ. դրամի:

6. <<Բնապահպանական նպատակային ֆոնդ>> արտաբյուջետային միջոցների ծախսման ընթացքում թույլ է տրվել 726.6 հազ. դրամի պայմանագրով չնախատեսված ծախսերի իրականացում (<<Հայաստանի բնության պետական թանգարան>> ՊՈԱԿ, <<Կենսաբանության և լանշաֆտների պահպանության միավորում>> ՀԿ), պայմանագրով նախատեսված 6341.6 հազ. դրամ գումարի անտառվերականգնման աշխատանքներ չեն կատարվել (<<ՀՀ անտառների վերականգնման և զարգացման>> հիմնադրամ), ինչպես

նաև երկու դեպքով չի հաշվարկվել աշխատանքները, ապրանքները պայմանագրերով նախատեսված ժամկետներին չկատարելու, չմատակարարելու դիմաց պայմանագրերով նախատեսված տույժերը՝ գումարով 901.0 հազ. դրամի:

7. Անտեսվել է ՀՀ կառավարության 1996թ. մայիսի 2-ի <<Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 147 որոշմամբ հաստատված կանոնադրության պահանջները և ձեռք բերված 9606.4 հազ. դրամի ապրանքանյութական արժեքներ (փամփուշտներ, գրքեր) առանց ծախսը հիմնավորող սկզբնական փաստաթղթերի ձևակերպվել են ծախսերով:

8***. <<Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի ծառայություններ>>*** ծրագրով <<Շրջական միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ը չի ապահովել պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը և ՀՀ պետական բյուջեից վերջինս ավել է ֆինանսավորվել ընդամենը 14255.1 հազ. դրամ:

9. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից Սևանա լճի ռեկրեացիոն գոտում հանրային լողափների կազմակերպման համար հատկացված գումարների հաշվին պայմանագրով նախատեսված բիոզուգարանների փոխարեն կառուցվել են այլ ինքնաշեն զուգարաններ, որոնց արժեքը կատարողական ակտերում շուկայական արժեքից թանկ գներով հաշվարկելու արդյունքում ավել է հաշվարկվել 1914.2 հազ. դրամով: Բացի այդ պայմանագրով նախատեսված, սակայն չկատարված շին. աշխատանքների համար նախատեսված գումարների հաշվին կատարվել է ոչ նպատակային ծախս՝ ձեռք է բերվել հնձիչ սարք գումարով 469.5 հազ. դրամի: Նշված գումարների հաշվին ձեռք բերված և <<Սևան ազգային պարկ>> ՊՈԱԿ-ին հանձնված 2932.4 հազ. դրամի ապրանքանյութական արժեքները (նույն թվում՝ հնձիչ սարքը՝ գումարով 469.5 հազ. դրամի) <<Սևան ազգային պարկ>> ՊՈԱԿ-ում չեն մուտքագրվել և հաշվապահական ձևակերպումներ չեն ստացել:

Առաջարկվել է.

- ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով պահանջը ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը, թույլ չտալ ավել նախատեսումների դեպքեր:
- Ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ ստուգմամբ արձանագրված գումարները ՀՀ պետական բյուջե և ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային միջոցների հաշվին վերականգնելու ուղղությամբ:
- Ղեկավարվել ՀՀ կառավարության 1996թ. մայիսի 2-ի թիվ 147 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին>> կանոնադրության պահանջներով՝ ապրանքանյութական արժեքների ծախսագրումները իրականացնել ծախսը հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում: Բացառել առանց պատշաճ ձևակերպված ծախսը հիմնավորող սկզբնական փաստաթղթերի առկայության փաստացի ծախսերի ձևակերպումները:
- Խիստ հսկողություն սահմանել ապրանքանյութական արժեքների մուտքագրման և հաշվառման նկատմամբ, բացառել ապրանքանյութական արժեքների չմուտքագրման դեպքերը, ապահովել ստուգմամբ արձանագրված ապրանքանյութական արժեքների հաշվառումը:

ՀՀ բնապահպանության նախարարության <<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ

1. <<Պետական աջակցություն «Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայություններ» ծրագրով ՀՀ բնապահպանության նախարարության և ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրերով ՊՈԱԿ-ը նախատեսված աշխատանքներից առանձին աշխատանքներ չի կատարել կամ կատարել է թերի, սակայն ՀՀ բնապահպանության նախարարությանը ներկայացված պայմանագրի կատարման հանձնման-ընդունման արձանագրություններում

թերակատարումները չեն արտացոլվել և ՀՀ պետական բյուջեից գումարները ամբողջությամբ ֆինանսավորվել են:

2. ՊՈԱԿ-ում արձանագրվել է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք բերված ապրանքանյութական արժեքների չմուտքագրման և պակասորդների դեպքեր ընդամենը գումարով 6670.0 հազ. դրամ:

Առաջարկվել է.

- Խիստ հսկողություն սահմանել դրամաշնորհի պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ, թույլ չտալ փաստացի կատարված աշխատանքների համեմատ ավել կատարողականների ներկայացման դեպքեր:
- Ապահովել ստուգման արդյունքներով արձանագրված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:
- Խիստ հսկողություն սահմանել ապրանքանյութական արժեքների ստացման, մուտքագրման ու պահպանման նկատմամբ: Ապահովել չմուտքագրված ապրանքների մուտքագրումը ՊՈԱԿ-ում և հաշվառել թանգարանի գույքամատյանում:

ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ

««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ ՊՈԱԿ) կատարված ստուգման արդյունքում արձանագրվել են.

- ՊՈԱԿ-ի կողմից տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված վարձակալության պայմանագրեր առանց նոտարական վավերացման և պետական գրանցման , ինչպես նաև վարձակալության պայմանագրերի վարձավճարների թերի հավաքագրման փաստեր, ինչը հանգեցրել է ապառքների գոյացմանը և համապատասխան տույժերի չհաշվարկմանը:

- ՊՈԱԿ-ի կողմից տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված հողի վարձակալության պայմանագրերի անհամապատասխանության դեպքեր ՀՀ կառավարության 24.12.2003թ. թիվ 1746-Ն որոշման և ՀՀ բնապահպանության նախարարի համապատասխան հրամանների պահանջներին, մասնավորապես՝ հողի վարձակալական տարեկան վարձավճարի գումարը սահմանվել է մեկնարկային գնից նվազ գնով, ինչի արդյունքում կազմակերպությանը պատճառվել է զգալի չափի վնաս:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Սևանի ՏՀՏ կողմից ՊՈԱԿ-ում իրականացված բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգմամբ կազմված ակտով վերականգնման առաջադրված գումարների սխալ հաշվարկման փաստեր, ինչի արդյունքում արձանագրվել է ՀՀ պետական բյուջե ետ վերադարձման ենթակա գումարներ:
- ՊՈԱԿ-ի և ՀՀ բնապահպանության նախարարության միջև կնքված դրամաշնորհի պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման համար ՊՈԱԿ-ի տարածքի մակերեսի սխալ ներկայացման դեպքեր:
- ՊՈԱԿ-ի միջոցով անտառահատման համար նախատեսված բնօգտագործման վճարների թերի հավաքագրման դեպքեր, ինչի արդյունքում արձանագրվել են ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:
- ՊՈԱԿ-ում իրականացված ապրանքանյութական արժեքների գույքագրման արդյունքում հայտնաբերվել է պակասորդ:
- ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՊՈԱԿ-ի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվների չհաստատման դեպքեր:
- ՊՈԱԿ-ի և մի շարք կապալառու կազմակերպությունների հետ կնքված համապատասխան պայմանագրերով նախատեսված աշխատանքների դիմաց պակաս կատարված կամ անհիմն իրականացված աշխատանքների դեպքեր, ինչի արդյունքում արձանագրվել է ՊՈԱԿ-ի հաշվին վերականգնման ենթակա գումարներ:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով իրականացված գնումներ:

Առաջարկվել է.

1. Ձեռնարկել միջոցներ վարձակալության պայմանագրերը օրենսդրության պահանջներին համապատասխան կազմման և վարձավճարների ճիշտ հաշվառման և ամբողջությամբ հավաքագրման ուղղությամբ:
2. Ձեռնարկել միջոցներ ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ծախսերը արդյունավետ և օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու ուղղությամբ:
3. Ձեռնարկել միջոցներ ՀՀ պետական բյուջե և ՊՈԱԿ-ի հաշվին արձանագրված գումարների վերականգնման ուղղությամբ:
4. Ձեռնարկել միջոցներ ՊՈԱԿ-ի գնումները «Գնումների մասին» և այլ օրենքների պահանջներին համապատասխան կազմակերպելու ուղղությամբ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

1. <<Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում>> ծրագրով.

- <<Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ>> հոդվածով տարեսկզբին առկա դեբիտորական պարտքի հաշվին առանց սահմանված կարգով ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու 6400.5 հազ. դրամ ուղղվել է աշխատավարձի հոդվածով նախահաշվով նախատեսվածից ավել ծախսեր կատարելուն (հիմնականում ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամաններով վճարվել են պարգևատրումներ):
- Նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և տարեսկզբի դրությամբ դեբիտորական պարտքերի մնացորդները հաշվի չառնելու հետևանքով ՀՀ պետական բյուջեում նախատեսվել են պահանջվածից ավել գումարներ, ստուգման արդյունքներով

հայտնաբերվել է տարբեր հոդվածներով ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսված ֆինանսավորումից պակասեցման ենթակա գումար՝ ընդամենը 8675.9 հազ. դրամի:

2.<<Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցություն>> ծրագրի գծով ՀՀ 2008թ. պետական բյուջեում ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու և ՀՀ կառավարության որոշումով միջոցառումների ցանկը հաստատված լինելու պայմաններում ծրագրի իրականացման գծով պայմանագրերը կնքվել են հիմնականում 2008թ. տարվա վերջին օրերին: Բացի այդ ծրագրի գծով կնքված պայմանագրերով նախատեսվել է, որ վճարումը իրականացվում է կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները սահմանված կարգով պատվիրատուին ներկայացնելու և հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում, սակայն ինչպես առանձին դեպքերում առանց հաշվետվություններ պահանջելու և առանց հանձնաժողովի դրական եզրակացության պայմանագրային գումարները կազմակերպություններին փոխանցվել են ամբողջությամբ՝ տեղիք տալով անհիմն դեբիտորական պարտքերի առաջացման: Այդ կերպ նախարարությունը խուսափել է ՀՀ կառավարության 18.01.2002թ. <<ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին>> թիվ 48 որոշմամբ հաստատված Կարգի պահանջների կատարումից՝ համաձայն որի գանձապետական ծախսային հաշիվներին և դրամարկղներում առկա մնացորդը բյուջետային տարվա վերջին աշխատանքային օրվա ավարտին փոխանցվում են ՀՀ պետական բյուջեի համապատասխան գանձապետական հաշվին: Ստուգման արդյունքներով հայտնաբերվել է նախորդ տարիներին նշված ծրագրի գծով չօգտագործված դրամական միջոցների մնացորդներ ընդամենը գումարով 38161.1 հազ. դրամի , որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

3. “<<Շանհայ էքսպո -2010>> համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցություն” ծրագրով արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ ընդամենը 81796.4 հազ. դրամի:

- <<Զարգացման հայկական գործակալություն>> ՓԲԸ-ի կողմից <<Մուլտիմեդիա ծրագրի պատրաստում>> աշխատանքների գծով ծախս ցույց տրված 14873.4 հազ. դրամը սկզբնական փաստաթղթերով չի հիմնավորվել, նշված գումարը 2010թ-ին փոխանցվել է <<Արմենիան Սեքշընն օֆ 2010>> ընկերության հաշվին և առանց համապատասխան հաշվետվության գումարը ձևակերպվել ծախսերով:

- Ծրագրի գծով 01.07.2011թ. դրությամբ դրամական միջոցների մնացորդը կազմել է 3057.3 հազ. դրամ, որը ստուգման արդյունքներով առաջարկվել է վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. “<<Շանհայ Էքսպո-2010>> համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցություն” ծրագրի գումարների հաշվին Չինաստանից ներկրված *101657.6 հազ. դրամ* գումարով ապրանքները մուտքագրվել են <<Զարգացման հայկական գործակալություն>> ՓԲԸ-ում, սակայն ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացված <<Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների>> ձև 4 հաշվետվությունում որպես պահեստավորված միջոցներ չեն արտացոլվել:

5.<<Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման պետական աջակցության>> ծրագրով ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների հաշվին գործուղման հոդվածով 3121.4 հազ. դրամի տնտեսումը ՀՀ պետական բյուջե չի վերադարձվել և անհիմն կարգով ծախսվել է <<Հայկական պատվիրակության խոսնակների համաժողովին մասնակցության գրանցման վճարներ>> աշխատանքների գծով նախատեսվածից ավելի կատարված ծախսերի ֆինանսավորման նպատակով, այն դեպքում երբ այդ ծախսերը պետք է փոխհատուցվեին հովանավորչական գումարների հաշվին:

6.Անտեսելով ՀՀ կառավարության 1996թ մայիսի 2-ի ‹‹Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին կանոնադրությունը հաստատելու մասին›› թիվ 147 որոշմամբ հաստատված կանոնադրության 7-րդ կետի պահանջները կատարված վճարումները ձևակերպվել են փաստացի ծախսերով առանց պատշաճ ձևակերպված ծախսը հիմնավորող սկզբնական

փաստաթղթերի առկայության ընդամենը գումարով 60863.4 հազ. դրամի (ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի գծով՝ 45478.0 հազ. դրամի, <<Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցություն>> ծրագրով՝ 15385.4 հազ. դրամի):

Առաջարկվել է.

- Բացառել այլ ծախսային հոդվածներով առաջացած տնտեսումների հաշվին անհիմն կարգով աշխատավարձերի և պարգևատրումների վճարումներ կատարելու դեպքերը:
- Ղեկավարվել ՀՀ կառավարության 18.01.2002թ. <<ՀՀ պետական և համայնքային բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին>> թիվ 48 որոշմամբ հաստատված Կարգի պահանջներով և բյուջետային միջոցների չօգտագործված մնացորդը բյուջետային տարվա վերջին աշխատանքային օրվա ավարտին փոխանցել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվին:
- ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով պահանջը ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը, թույլ չտալ ավել նախատեսումների դեպքեր:
- Ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ ստուգմամբ արձանագրված գումարները ՀՀ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:
- Ղեկավարվել ՀՀ կառավարության 1996թ. մայիսի 2-ի թիվ 147 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին>> կանոնադրության պահանջներով՝ ապրանքանյութական արժեքների ծախսագրումները իրականացնել ծախսը հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում: Բացառել առանց պատշաճ ձևակերպում ստացած ծախսը հիմնավորող սկզբնական փաստաթղթերի փաստացի ծախսերի ձևակերպումները: Հնարավոր սեղմ ժամկետում ապահովել ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից վճարված *45478.0 հազ. դրամի* և <<Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական

աջակցություն>> ծրագրի գծով *15385.4 հազ. դրամի* ծախսերի հիմնավորումը սկզբնական փաստաթղթերով: Պայմանագրերից պակաս կատարված աշխատանքային ծավալների (չհիմնավորված ծախսերի) դիմաց վճարված գումարները վերականգնել ՀՀ պետական բյուջե:

- "<<Շանհայ էքսպո-2010>> համաշխարհային ցուցահանդեսին ՀՀ մասնակցություն" ծրագրի գծով <<Զարգացման հայկական գործակալություն>> ՓԲԸ-ում պահեստավորված 101657.6 հազ. դրամի ապրանքանյութական արժեքների մնացորդները արտացոլել ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվող <<Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների>> ձև 4 հաշվետվությունում, միաժամանակ ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանց հետագա տնօրինման և օգտագործման ուղղությամբ:

ՀՀ սփյուռքի նախարարություն

1. "Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում" ծրագրով առանձին ծախսային հոդվածներով նախորդ տարիների փաստացի ծախսերը հաշվի չառնելու արդյունքում թույլ են տրվել ծախսերի նախահաշիվներում ավել գումարների նախատեսման դեպքեր՝ գումարով ***8033.5*** հազ. դրամի:

2. Թույլ են տրվել "Մշակութային միջոցառումների իրականացում", "Սփյուռքի երիտասարդության պարբերական այցելություններ Հայաստան <<Արի տուն>>", և "Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ" ծրագրերով փաստացի ծախսերի համեմատ ավել ֆինանսավորումներ՝ ընդամենը գումարով ***1145.2հազ. դրամի***:

3. Անտեսվել է ՀՀ կառավարության 1996թ մայիսի 2-ի թիվ 147 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման և հաշվետվության մասին>> կանոնադրության պահանջները և <<Գիտական

գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակության կիրառական հետազոտություններ>> ծրագրով 2011թ 9 ամսում 5880.0 հազ. դրամի աշխատանքների ծախսագրումներն իրականացվել են առանց ծախսը հիմնավորող փաստաթղթերի առկայության:

4. Ներքին աուդիտի ծրագրեր չեն կազմվել և ներքին աուդիտ չի իրականացվել: 2008-2011թթ նախարարության աշխատակազմի գլխավոր աուդիտորի պաշտոնը հիմնականում թափուր է եղել, միայն 18.03.2011թ.-ից մինչև 26.07.2011թ ընկած ժամանակահատվածում է նշված պաշտոնը զբաղեցվել:

Առաջարկվել է.

- ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով բյուջետային հայտերում գումարների պահանջ ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և տարեվերջին սպասվելիք դեբիտորական պարտքերի մնացորդները, թույլ չտալ իրական պահանջից ավել գումարների նախատեսման դեպքեր:
- Ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ արձանագրված գումարների ՀՀ պետական բյուջե վերադարձն ապահովելու ուղղությամբ:
- *Ա*շխատանքների կատարման վերաբերյալ սկզբնական փաստաթղթերով հիմնավորված հաշվետվություններ չներկայացնելու դեպքում ապահովել համապատասխան ֆինանսավորված գումարների հետ գանձումը կազմակերպություններից:
- Ապահովել <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ թիվ 934-Ն հրամանի պահանջները՝ ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմում ներդնել ներքին աուդիտի համակարգ:

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն

1. “Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում” ծրագրով առանձին ծախսային հոդվածներով նախորդ տարիների փաստացի ծախսերը հաշվի չառնելու արդյունքում թույլ են տրվել ծախսերի նախահաշիվներում ավել գումարների նախատեսման դեպքեր՝ գումարով ***7200.1 հազ. դրամի*** :

2. Թույլ է տրվել “Միջին մասնագիտական կրթություն” ծրագրով վարչության ու <Ավիաուսումնական կենտրոն> ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրերի համեմատ, փաստացի սովորողների թվի պակաս լինելու արդյունքում ՀՀ պետական բյուջեից ավել ֆինանսավորում գումարով՝ 863.3 հազ. դրամ:

Պետական պատվերով սովորող օդաչու-ուսանողների ուսումնավարժանքային թռիչքների իրականացման և թռիչքային հմտությունների ձեռքբերման նպատակով վարչության և <<Ավիաուսումնական կենտրոն>> ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրերով չեն նախատեսվել կատարված աշխատանքների ընդունման հանձնման հստակ մեխանիզմներ, որպես փաստացի կատարված աշխատանքների ծավալները հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է <<Ավիաուսումնական կենտրոն>> ՓԲԸ-ի տեղեկանքները՝ կատարված թռիչքների ժամերի և փաստացի ծախսերի վերաբերյալ, որոնք ստորագրված և հաստատված չեն ընկերության տնօրենի կողմից, այլ ստորագրված են միայն գլխավոր հաշվապահի կողմից:

3. Վարչությունը չի ապահովել արտաբյուջետային եկամուտների պլանի կատարումը՝ եկամուտները պակաս են ստացվել 2008թ.-ին՝ 66.1 մլն. դրամ կամ 28.2 տոկոս, 2009թ.-ին՝ 67.4 մլն. դրամ կամ 26.6 տոկոս, 2010թ.-ին՝ 77.5 մլն. դրամ կամ 23.4 տոկոս: Թերակատարումները <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ից շահութաբաժինների գծով եկամուտների թերակատարումների հետևանք են:

4. Արտաբյուջետային միջոցների հաշվին կատարված ծախսերի ստուգմամբ արձանագրվել է.

- <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով գումարները նախատեսվել են առանց այդ հոդվածով իրականացվող ծախսերի իրական պահանջը հաշվի առնելու և 2008-2011թթ. <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված 112626,7 հազ. դրամի դիմաց ընդամենը կատարվել է 19136,0 հազ. դրամի փաստացի ծախս:

- <Գործուղումների և շրջագայությունների ծախսեր> հոդվածով ծախսերը հաշվարկելիս և վճարելիս վարչությունում չեն առաջնորդվել ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2335-ն որոշման պահանջներով, որի արդյունքում ավել է հաշվարկվել և վճարվել ***574,6 հազ. դրամ:***

Առաջարկվել է.

- ՀՀ պետական բյուջեում գումարների նախատեսման նպատակով պահանջը ներկայացնելիս հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը, թույլ չտալ ավել նախատեսումների դեպքեր:

- Ապահովել <Գործադիր իրշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կենտրոնական ապարատի պահպանում> ծրագրով նախատեսված ֆինանսավորման գումարից ***7200,1***հազ. դրամի պակասեցումները:

- Ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ <Միջին մասնագիտական կրթություն և կրթաթոշակ> ծրագրի գծով արձանագրված ***863,3*** հազ. դրամը ՀՀ պետական բյուջեի հաշվին և <Գործուղումներ և շրջագայություններ> հոդվածով արձանագրված ***574,6*** հազ. դրամը արտաբյուջետային միջոցների հաշվին վերականգնելու ուղղությամբ:

- Արտաբյուջետային միջոցների եկամուտների ու ծախսերի պլանավորման ընթացքում հաշվի առնել նախորդ տարիների փաստացի ցուցանիշները և ՀՀ

կառավարության հաստատմանը ներկայացվող <<Արտաբյուջետային միջոցների գոյացման ու տնօրինման ծախսերի>> նախահաշիվներում նախատեսել հնարավորինս կանխատեսելի եկամուտների և ծախսերի գումարներ:

- ՀՀ ԿԱ ՔԱԳՎ և <<Ավիաուսումնական կենտրոն>> ՓԲԸ-ի միջև 2008-2011թթ համար օդաչու-ուսանողների ուսումնավարժանքային թռիչքների իրականացման և թռիչքային հմտությունների ձեռքբերման նպատակով միջոցների հատկացման վերաբերյալ կնքված պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ հաշվետվությունները կազմել և ներկայացնել հաստատված ձևով՝ ընկերության տնօրենի կողմից ստորագրելուց հետո:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ

1. <<Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում>> ծրագրով առանձին ծախսային հոդվածներով, ինչպես նաև <<ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվեր>> ծրագրով ծախսերի նախահաշիվներում Խորհրդի կողմից հաշվի չեն առնվել նախորդ տարիների փաստացի ծախսերի մակարդակը և նախատեսվել են պահանջվելիքից ավել գումարներ ընդամենը 8241.4 հազ. դրամ:

2. 2008-2010թթ. բյուջետային հայտերով հաշվարկված և ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով ընդունված պետական պատվերով սովորող մագիստրոսների թվի համեմատ <<ՀՀ պետական կառավարման ակադեմիա>> ՊՈԱԿ-ում փաստացի սովորողների թիվը պակաս է եղել՝ արդյունքում ՀՀ պետական բյուջեից <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն>> ծրագրով 2008-2010թթ. պահանջվելիքից ավել ֆինանսավորում է տեղի ունեցել:

3. ՀՀ պետական բյուջեով <<ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվեր>> ծրագրով 2008-2010թթ. յուրաքանչյուր տարվա համար նախատեսված 2500 քաղաքացիական ծառայողների համեմատ 2008թ.

պակաս են վերապատրաստվել 557 քաղծառայողներ և ծրագրի գծով չի ծախսվել 4956.9 հազ. դրամ, 2009թ.-ին պակաս են վերապատրաստվել 330 քաղծառայողներ և ծրագրի գծով չի ծախսվել 4493.8 հազ. դրամ, 2010թ.-ին պակաս են վերապատրաստվել 673 քաղծառայողներ, ծրագրի գծով չի ծախսվել 8686.6 հազ. դրամ:

Քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակ հետապնդող վերապատրաստումների ծրագրերը վերջին 5-6 տարիներին հիմնականում չեն թարմացվել և տվյալ պաշտոնը զբաղեցնող քաղաքացիական ծառայողին երկրորդ, երրորդ անգամ վերապատրաստելիս մատուցվել են նույն ծրագրերը, այսինքն արդյունքում չի ապահովվել <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի պահանջները՝ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործում տեղի չի ունենում:

4. Առանց սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի կատարվել են լրացուցիչ շինարարական վերանորոգման աշխատանքներ:

5. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. թիվ 934-Ն հրամանով հաստատված <<ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև վերջիններիս ենթակա մարմիններում ներքին աուդիտի անցկացման կարգի>> 6-րդ կետով սահմանվել է, որ <<Գլխավոր աուդիտորի համար տվյալ մարմնում և ենթակա հիմնարկներում աուդիտի կազմակերպումը և իրականացումը հանդիսանում է վերջինիս միակ աշխատանքային պարտականությունը>>: Սակայն, ՀՀ ՔԾ խորհրդի աշխատակազմում գլխավոր աուդիտորի պարտականությունները 03.05.2004թ.-ից կատարել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի ղեկավարի տեղակալը:

Առաջարկվել է

- ՀՀ 2011թ պետական բյուջեով նախատեսված պահանջվելիքից ավել ***8241.4 հազ. դրամը*** չօգտագործել՝ չծախսել համապատասխան նախատեսված ծրագրերով և ծախսային հոդվածներով

- Ձեռնարկել համապատասխան միջոցներ <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն>> ծրագրի գծով ավել ֆինանսավորված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե ապահովելու ուղղությամբ:

- Շինարարական վերանորոգման աշխատանքների կատարողական ակտերը կազմել միայն փաստացի կատարված աշխատանքներին համապատասխան, առանց սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի թույլ չտալ լրացուցիչ աշխատանքների իրականացում:

- Առաջնորդվել <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքով և գործող ենթաօրենսդրական ակտերով: Բարձրացնել ներքին աուդիտի գործառույթների իրականացման արդյունավետությունը:

- Ձեռնարկել բավարար ու անհրաժեշտ միջոցներ <<ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվեր>> ծրագրով ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների ծախսման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, մասնավորապես.

- ապահովել ՀՀ պետական բյուջեով նախատեսված թվաքանակին համապատասխան քաղաքացիական ծառայողների վերապատրաստումների անցկացումը,
- վերանայել վերապատրաստման դասընթացների ծրագրերը, պահանջել համապատասխան մարմիններից ծրագրերում պարբերաբար կատարել թարմացումներ, դրանցում ընդգրկելով նշված ժամանակաշրջանի համար առավել արդիական մասնագիտական հարցեր՝ հնարավորինս բացառելով երկրորդ անգամ

վերապատրաստվող քաղծառայողների համար վերապատրաստման ծրագրերի կրկնությունը և այլն:

ՀՀ կառավարութանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Գավառի և Գորիսի տարածքային հարկային տեսչություններ

Գավառի ՏՀՏ-ում և Գորիսի ՏՀՏ-ում ստուգման թիրախում ընդգրկված համապատասխանաբար թվով 24 հարկ վճարողներից թվով 17-ի և թվով 27 հարկ վճարողներից թվով 18-ի գծով արձանագրվել են տարբեր բնույթի ՀՀ օրենսդրության պահանջների խախտման փաստեր, որոնք հիմնականում հետևանք են հարկային մարմինների լիազորությունների ոչ պատշաճ մակարդակով իրականացման, մասնավորապես նրանց կողմից ՝Շահութահարկի մասին՝, ՝Ավելացված արժեքի հարկի մասին՝, ՝Պարզեցված հարկի մասին՝ ՀՀ օրենքների պահանջների չապահովման, ինչպես նաև ՝Հարկերի մասին՝ ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ, 26-րդ 27-րդ եւ 28-րդ հոդվածներով եւ ՝Ավելացված արժեքի հարկի մասին՝ ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված պատժամիջոցների ոչ ճիշտ կիրառման:

Միաժամանակ հաստատագրված վճար վճարող համարվող, պարզեցված հարկ վճարող հանդիսացող եւ ՀՀ տարածք ներմուծումներ իրականացրած ֆիզիկական անձանց գծով արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգնման ենթակա գումարներ:

Հատկանշական են արձանագրված ներքոթվարկված խախտումները.

- Հարկային մարմինների կողմից հարկ վճարողների մոտ կատարված ստուգումների ընթացքում շահութահարկի առումով ընդունված ծախսերի իրական մեծությունը ճշգրիտ չորոշելու, հաշվետու տարվա ընթացքում հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը որպես ընթացիկ դիտարկելու փաստերը չբացահայտելու արդյունքում ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա գումարները հաշվարկվել են հասանելիքից պակաս չափով.

- ՝Ավելացված արժեքի հարկի մասին՝ ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված կարգով հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ներառված՝ հարկ վճարողների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում ցույց տրված իրացման ծավալները, ինչպես նաև ՝տեղեկություններ չներկայացնող եւ պարզման ենթակա հարկային հաշիվների վերաբերյալ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայի տեղեկությունները նույն ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներում ցույց տրված իրացման շրջանառությունների հետ չհամեմատելու և ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց ԱԱՀ-ի գծով խոշոր չափերի հասնող հաշվանցումներ կատարելու արդյունքում ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվարկվել են հասանելիքից պակաս չափով:

- “Ավելացված արժեքի հարկի մասին՝՝ ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջի ապահովման եւ ձեռք բերված ապրանքների եւ ստացած ծառայությունների գծով մատակարարներին չվճարված հաշիվների մասով ԱԱՀ-ի հետաձգված պարտավորությունների և վճարումը կատարելուց հետո հաշվանցման ենթակա գումարների ձեւակերպման հարցերին չանդրադառնալու արդյունքում չեն արձանագրել հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից ավել վերականգնման փաստերը, որոնք հանգեցրել են պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի պակաս ցույց տալուն:

- Անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել առանց համապատասխան լիցենզիայի առկայության լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու փաստերի բացահայտման ու ՝Հարկերի մասին՝ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված պատժամիջոցի կիրառման հարցերին, որի արդյունքում գանձման չի առաջադրվել հասանելիք տուգանքի գումարները:

- Հարկային մարմինների կողմից ՝՝Շահութահարկի մասին՝՝ ՀՀ օրենքի 47^1 եւ ՝՝Եկամտահարկի մասին՝՝ ՀՀ օրենքի 29^1 հոդվածներով սահմանված կարգով որոշված՝ նվազագույն շահութահարկի (եկամտահարկի) ամսական (եռամսյակային) գումարները սահմանված ժամկետներում ՀՀ պետական բյուջե վճարելու հարցին պատշաճ

ուշադրություն չդարձնելու արդյունքում չեն հաշվարկվել եւ գանձման չեն առաջադրվել . շահութահարկի (եկամտահարկի) նվազագույն գումարները սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե չփոխանցելու համար նախատեսված տույժերը:

Ստուգմամբ առանձին հարկ վճարողների գծով արձանագրված՝ ՀՀ պետական բյուջեի հանդեպ լրացուցիչ պարտավորությունների վերջնական մեծությունը կարող է ճշտվել հարկ վճարողների մոտ ստուգումներ եւ վերստուգումներ կատարելու միջոցով:

Առաջարկվել է.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում քննարկման առարկա դարձնել Գավառի և Գորիսի տարածքային հարկային տեսչություններում կատարված ստուգման արդյունքներով կազմված ակտը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

- ՀՀ պետական բյուջեին հասանելիք լրացուցիչ հարկային պարտավորությունների վերջնական մեծությունը ճշտելու նպատակով Գավառի ՏՀՏ-ում թվով 6 հարկ վճարողների մոտ իրականացնել ստուգումներ,իսկ թվով 8-ի մոտ՝ վերստուգումներ, Գորիսի ՏՀՏ-ում թվով 1 հարկ վճարողի մոտ իրականացնել ստուգում, իսկ թվով 16-ի մոտ՝ վերստուգումներ:

- Հարկ վճարողների մոտ ստուգում իրականացնող հարկային ծառայողների ուշադրությունը հրավիրել <Հարկերի մասին> եւ առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքներով սահմանված դրույթների ճշգրիտ կիրառման եւ հարկային պարտավորությունների ճիշտ հաշվարկման ու գանձման հարցերին:

Շիրակի տարածաշրջանային մաքսատուն

Ստուգմամբ արձանագրվել են ՀՀ մաքսային օրենսդրության պահանջների խախտման մի շարք փաստեր, որոնք ազդել են ՀՀ պետական բյուջե գանձման ենթակա գումարների մեծության վրա:

Հատկանշական են արձանագրված ներքոթվարկված խախտումները.

- Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից ՀՀ ներկրված ապրանքների գծով բանկեր կանխիկ վճարված գումարները ՀՀ պետական բյուջեի համապատասխան գանձապետական հաշիվներին մուտքագրվել են զգալի ուշացումներով:
- <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 6^1-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ԱԱՀ-ի գումարների վճարման հետաձգված ժամկետներ ունեցող տնտեսվարող սուբյեկտները ԱԱՀ-ի հետաձգված պարտավորությունների վճարման ժամկետի ավարտից հետո մաքսատուն չեն ներկայացրել հարկային մարմինների կողմից տրված տեղեկանքներ՝ հետաձգված ԱԱՀ-ի գումարների բյուջե վճարման մասին, իսկ մաքսատան կողմից <Ավելացված Արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 6^1-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն չի հաշվարկվել եւ գանձման չի առաջադրվել տույժերի գումարներ:
- Առանձին դեպքերում Շիրակի տարածաշրջանային մաքսատունը տնտեսվարող սուբյեկտների կողմից ՀՀ ներկրված ապրանքների հայտարարագրման ժամանակ մաքսային արժեքի որոշման 4-րդ մեթոդի /շուկայական արժեքի/, կիրառման դեպքերում հաշվի չի առել ՀՀ կառավարության 2002թ դեկտեմբերի 5-ի թիվ 2170-Ն որոշման 6-րդ կետով նախատեսված դրույթները եւ հայտարարագրվող ապրանքների մաքսային արժեքները որոշել է առանց հաշվի առնելու ներքին շուկայում տվյալ ապրանքների իրացման գների մակարդակները, որը հանգեցրել է մաքսային արժեքների ոչ իրական մեծության որոշման;
- Առանձին դեպքերում ներմուծված ապրանքների հայտարարագրման ժամանակ մաքսատան կողմից մաքսային արժեքը հաշվարկվել է 4-րդ մեթոդով (շուկայական

արժեքով), սակայն մաքսային արժեքը ձևավորելիս նույն ծագման երկրի (նույն արտադրողի), նույն ֆիրմայից, նույն ժամանակաշրջանում ներկրված նույն տեսակի ապրանքների հայտարարագրման ժամանակ ցուցաբերվել է տարբերակված մոտեցում:

- ՀՀ մաքսային օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ կետով եւ ՀՀ կառավարության 1999թ ապրիլի 19-ի թիվ 230 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի <բ> ենթակետով սահմանված ժամկետներում հայտարարատուների կողմից ՀՀ պետական բյուջեին հասանելիք մաքսային վճարները չվճարելու պայմաններում մաքսատան կողմից առանձին դեպքերում չեն կիրառվել < ՀՀ մաքսային օրենսգրքի> 108-րդ հոդվածի 4-րդ կետով և <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված պատժամիջոցները եւ չի հաշվարկվել ու ՀՀ պետական բյուջե չեն գանձվել հասանելիք տույժերը:

- Առանձին դեպքերում մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման ժամանակ խախտելով ՀՀ <Մաքսային օրենսգրքի> 52-րդ հոդվածի պահանջները հայկական ծագում ունեցող ապրանքների արտահանման ժամանակ կիրառվել է <վերաարտահանում> մաքսային ռեժիմը:

Առաջարկվել է.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում քննարկման առարկա դարձնել Շիրակի տարածաշրջանային մաքսատանը կատարված ստուգման արդյունքներով կազմված ակտը, միջոցներ ձեռնարկել ստուգմամբ արձանագրված խախտումների վերացման, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:

- Բավարար միջոցներ ձեռնարկել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից մաքսատան գծով սահմանված եկամուտների կանխատեսվող մուտքերի ամբողջական հավաքագրման ուղղությամբ:

- Տնտեսվարող սուբյեկտների կողմից բանկ մուծված մաքսային վճարներն առևտրային բանկերի կողմից ՀՀ պետական բյուջե սահմանված ժամկետում չփոխանցման

յուրաքանչյուր դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից կիրառել կողմերի միջեւ կնքված պայմանագրերով նախատեսված պատժամիջոցները, իսկ դրանց բացակայության դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված պատժամիջոցը:

- <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 6^1-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ԱԱՀ-ի գումարների վճարման հետաձգված ժամկետներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներից պահանջել համապատասխան հարկային մարմինների կողմից տրամադրված տեղեկանքներ եւ հետաձգված գումարները վճարված չլինելու դեպքում <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 6^1-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ապահովել համապատասխան գումարների գանձումը ՀՀ պետական բյուջե:

- Ղեկավարվել <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 6^1-րդ հոդվածի պահանջներով և առանձին տնտեսվարող սուբյեկտների գծով հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման հետաձգված ժամկետները լրանալուց հետո հաշվարկել <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 6^1-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված տույժերը, գրանցել մաքսային վճարների հաշվառման քարտերում եւ ապահովել վերջիններիս գանձումը ՀՀ պետական բյուջե:

- Մաքսային վճարների հաշվառումը իրականացնել ՀՀ մաքսային պետական կոմիտեի նախագահի 2002թ փետրվարի 11-ի թիվ 02/14 հրամանով հաստատված՝<Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների մաքսային վճարների հաշվարկման լրացման վերաբերյալ> կարգի պահանջներին համապատասխան՝ կատարելով համապատասխան գրանցումներ հետաձգված պարտավորությունների եւ հաշվարկված տույժերի մասով:

- Մաքսային արժեքի որոշման նպատակով ներմուծված ապրանքների արժեքը 4-րդ մեթոդով (շուկայական արժեքով) հաշվարկելիս բացառել տարբերակված մոտեցումների կիրառումը:

- Ապրանքների արտահանման եւ ներմուծման դեպքերում մաքսային ռեժիմների կիրառման ժամանակ առաջնորդվել ՀՀ մաքսային օրենսգրքի պահանջներով եւ

բացառել հայկական ծագում ունեցող ապրանքների հայտարարագրումը <վերաարտահանում > մաքսային ռեժիմով:

ՀՀ ՄԱՐԶԵՐ

2011թվականի ընթացքում ստուգումներ են իրականացվել ՀՀ Տավուշի և Վայոց Ձորի մարզերում: ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2011 թվականի ծրագրով ստուգումների անցկացումը նախատեսված էր մարզպետարաններում, տեղական ինքնակառավարման մարմիններում՝ քաղաքային համայնքներում:

ՀՀ Տավուշի մարզպետարան

-Ստուգվող ժամանակաշրջանում մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ավել է ֆինանսավորվել 7953.8 հազ. դրամ, որից մինչև ստուգումը վերականգնվել է 1627.5 հազ. դրամ, մնացած 6326.3 հազ դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

- 2011թ. հունվարի 1-ի դրությամբ թվով 6 հանրակրթական դպրոցներում հայտնաբերվել են ներկայացված աշակերտների թվի տարբերություններ, որոնք պետք է հաշվի առնվեն 2011թ. նախահաշիվները ճշտելու և ֆինանսավորելու ժամանակ:

-Ստուգվող ժամանակաշրջանում մարզպետարանի կողմից աուդիտի իրականացումն ընթացքում հանրակրթական դպրոցներին՝ ֆինանսավորման համար հիմք հանդիսացող աշակերտների փաստացի թվաքանակների ճշտության ստուգում չի իրականացվել:

- Թվով 4 սոցիալական ծառայության տարածքային գրասենյակների կողմից ստուգվող ժամանակաշրջանում նպաստառուներին ավել է հաշվարկվել և վճարվել 1417.0 հազ. դրամ:

- 2011թ. համար էլեկտրաէներգիայի և կապի ծառայությունների գծով անհրաժեշտ ծախսերը հաշվարկվել և 2011թ. ծախսերի նախահաշվով նախատեսվել են ՀՀ կառավարության 30.12.2004թ. թիվ 1956-Ն և 28.04.2005թ. թիվ 629-Ն որոշումներով հաստատված նորմաների համապատասխան՝ հաշվի չառնելով վերը նշված հոդվածների գծով տարեսկզբի դեբիտորական պարտքի գումարները, որոնք կազմել են 475.7 հազ դրամ:

- Թվով 14 շինարարական օբյեկտներում արձանագրվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերով և ծավալաթերթով նախատեսված, հանձնման-ընդունման արձանագրություններում ամփոփված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների ծավալ՝ ընդհանուր գումարով 5858.2 հազ դրամի:

Հովք գյուղի դպրոցի մարզադահլիճի վերանորոգման գծով հայտնաբերվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերում ժամանակին փոփոխություններ չկատարելու պայմաններում կատարված 1008.6 հազ դրամի աշխատանքների ծավալ:

Առաջարկվել է

1. ՀՀ Տավուշի մարզպետարանում քննարկման նյութ դարձնել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ժամանակին կապիտալ ծախսերի գծով նախագծա-նախահաշվային փաստաթղթերում, ծավալաթերթ նախահաշիվներում սահմանված կարգով փոփոխություններ չկատարելու, ինչպես նաև ՀՀ օրենքների պահանջները չկատարելու հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ապահովել.

ա) Աուդիտի իրականացման ընթացքում հանրակրթական դպրոցներին ֆինանսավորման համար հիմք հանդիսացող աշակերտների փաստացի թվաքանակների ճշտության ստուգումը:

բ) Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ավել ֆինանսավորված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

գ) ՄԾՏԳ - ների կողմից նպաստառուներին ավել վճարված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

դ) 01.01.2011թ. դրությամբ էլեկտրաէներգիայի և կապի ծառայությունների գծով ձևավորված **475.7** հազ. դրամի պակասեցումը 2011թ. նախահաշվի գումարից:

ե) Մարզպետարանի կապիտալ ծախսերի գծով ավել վճարված **5858.2** հազ. դրամ գումարի գանձումը ՀՀ պետական բյուջե:

ՀՀ Տավուշի մարզի Իջևանի, Դիլիջանի և Բերդի քաղաքային համայնքներ Ստուգումների արդյունքներով արձանագրվել է.

- Համայնքների կողմից դոտացիայի ստացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հողի հարկի և գույքահարկի ելակետային տվյալներում առկա անճշտություններ:
- Համայնքների հողի հարկի և գույքահարկի բազաներից դուրս են մնացել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որի արդյունքում պակաս գումարներ են հաշվարկվել և չեն գանձվել:
- Դիլիջանի և Բերդի քաղաքային համայնքներում բյուջեի եկամուտի կորուստների փոխհատուցման ենթակա գումարի հաշվարկման համար տրամադրված «ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի» և «ծխախոտի վաճառքի» ելակետային տվյալներում առկա անճշտություններ:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով իրականացված գնումներ:

- Բերդի քաղաքային համայնքում պետության կողմից պատվիրված լիազորությունների իրականացման նպատակով հատկացված միջոցների օգտագործման խախտման դեպքեր, ինչի արդյունքում արձանագրվել են ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:
- Բերդի քաղաքային համայնքում ՀՀ Պետական բյուջեից համայնքային բյուջեին տրամադրված նպատակային հատկացումների (սուբվենցիայի) պայմանագրի պահանջների խախտման դեպքեր, ինչի արդյունքում արձանագրվել են ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:
- Դիլիջանի քաղաքային համայնքում ՀՀ կառավարության 2009թ դեկտեմբերի 23-ի «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ոլորտները և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1854-Ն Որոշման պահանջների խախտման դեպքեր, ինչի արդյունքում արձանագրվել են ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. թիվ 934-Ն հրամանով սահմանված ներքին աուդիտի անցկացման կարգի խախտման դեպքեր:

Առաջարկվել է.

1. 2012թ. ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկների համար ՀՀ Ֆինանսների նախարարությանը տրամադրված 2010թ. գույքահարկի և հողի հարկի գծով սխալ ներկայացված ելակետային տվյալները ճշտել և ճշտված տարբերակները ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարությանը:
2. Ձեռնարկել միջոցներ համայնքների բյուջեների հարկային և ոչ հարկային եկամուտների գումարների ճիշտ հաշվառման և ամբողջությամբ հավաքագրման ուղղությամբ:
3. Ձեռնարկել միջոցներ ստուգման արդյունքներով արձանագրված ՀՀ պետական բյուջե և համայնքային բյուջեներ վերականգնման ենթակա գումարների վերականգնման ուղղությամբ:

4. Ձեռնարկել միջոցներ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. թիվ 934-Ն հրամանի պահանջները կատարելու ուղղությամբ:
5. Գնումների գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան

- Ստուգվող ժամանակաշրջանում մարզպետարանի կողմից աուդիտի իրականացման ընթացքում հանրակրթական դպրոցներին ֆինանսավորման համար հիմք հանդիսացող աշակերտների փաստացի թվաքանակների ճշտության ստուգմամբ արձանագրվել է 343.7 հազ. դրամ ավել ֆինանսավորված գումար, որը ՀՀ պետական բյուջե չի փոխանցվել:
- Ստուգվող ժամանակաշրջանում մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ավել է ֆինանսավորվել 664.1 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:
- Թվով 2 սոցիալական ծառայության տարածքային գրասենյակների կողմից ստուգվող ժամանակաշրջանում նպաստառուներին ավել է վճարվել 1618.0 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:
- 2009-2010թթ և 2011թ. 9-ը ամիսների ընթացքում մարզպետարանի աշխատակիցներին վճարվել է 216.0 հազ. դրամ ավել գործուղման ծախս, խախտելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի 2-րդ պարբերության պահանջները:
- Թվով 14 շինարարական օբյեկտներում արձանագրվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերով և ծավալաթերթով նախատեսված, հանձնման-ընդունման արձանագրություններում ամփոփված և վճարված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների ծավալ՝ ընդհանուր գումարով 5426.6 հազ. դրամի:

Առաջարկվել է

1. ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանում քննարկման նյութ դարձնել ստուգման ակտով արձանագրված խախտումները և բացթողումները, ինչպես նաև ՀՀ օրենքների պահանջները չկատարելու հարցում պաշտոնատար անձանց իրենց պարտականությունների մեջ թերանալու համար պատասխանատվության ենթարկելու հարցը:

Ապահովել.

ա) Աուդիտի իրականացման ընթացքում հանրակրթական դպրոցներին ֆինանսավորման համար հիմք հանդիսացող աշակերտների փաստացի թվաքանակների ճշտության արդյունքում արձանագրված **343.7** հազ. դրամ գումարի վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

բ) Մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներին ավել ֆինանսավորված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

գ) ՍԾՏԳ-ների կողմից նպաստառուներին ավել վճարված գումարների վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

դ) 2009-2010թթ և 2011թ. 9-ը ամիսների ընթացքում մարզպետարանի աշխատակիցներին գործուղման նպատակով ավել վճարված գումարի վերականգնումը ՀՀ պետական բյուջե:

ե) Մարզպետարանի կապիտալ ծախսերի գծով ավել վճարված **5426.6** հազ. դրամ գումարների գանձումը ՀՀ պետական բյուջե:

ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնք.

Ստուգման արդյունքներով արձանագրվել է.

- Համայնքի կողմից դոտացիայի ստացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հողի հարկի և գույքահարկի ելակետային տվյալների անճշտություններ:

- Համայնքի հողի հարկի և գույքահարկի բազաներից դուրս են մնացել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որի արդյունքում պակաս են հաշվարկվել գումարներ և չեն գանձվել:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներով իրականացված գնումներ:
- Համայնքում պետության կողմից պատվիրված լիազորությունների իրականացման նպատակով հատկացված միջոցների օգտագործման խախտման դեպքեր, ինչի արդյունքում արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:
- Համայնքում ՀՀ Պետական բյուջեից համայնքային բյուջեին տրամադրված ուսման վարձավճարների փոխհատուցման և շինարարական աշխատանքների իրականացման նպատակային հատկացումների (սուբվենցիայի) պայմանագրի պահանջների խախտման դեպքեր, ինչի արդյունքում արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:
- Համայնքի սոցիալական ծառայության տարածքային բաժնի կողմից նպաստների նշանակման և վճարման խախտման դեպքեր, ինչի արդյունքում արձանագրվել է ՀՀ պետական բյուջե վերականգման ենթակա գումարներ:
- «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. թիվ 934-Ն հրամանով սահմանված չի ստեղծվել ներքին աուդիտի համակարգ:

Առաջարկվել է.

1. 2012թ. ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկների համար ՀՀ Ֆինանսների նախարարությանը տրամադրված 2010թ. գույքահարկի և հողի հարկի գծով սխալ ներկայացված ելակետային տվյալները ճշտել և ճշտված տարբերակները ներկայացնել ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

2. Ձեռնարկել միջոցներ համայնքների բյուջեների հարկային և ոչ հարկային եկամուտների աղբյուրների ճիշտ հաշվառման և ամբողջությամբ հավաքագրման ուղղությամբ:
3. Ձեռնարկել միջոցներ ստուգման արդյունքներով արձանագրված ՀՀ պետական բյուջե և համայնքային բյուջեներ վերականգնման ենթակա գումարների վերականգնման ուղղությամբ:
4. Ձեռնարկել միջոցներ համայնքի համապատասխան գնումները «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իրականացնելու , և առաջնորդվել «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.12.2002թ. թիվ 934-Ն հրամանի և այլ օրենքների պահանջներին համապատասխան:

2011թ. ծրագրային ստուգումների արդյունքում արձանագրված գումարներից 2012թ. 1-ին եռամսյակում վերականգնվել կամ վերաձևակերպվել է 100,879.9 հազ. դրամ, նույն թվում ՀՀ բնապահպանության նախարարության ստուգումներով 30,996.1 հազ. դրամ, ՀՀ սփյուռքի նախարարության ստուգումներով՝ 8,809.8 հազ. դրամ,ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի ստուգումներով՝ 5,967.7 հազ. դրամ, ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության ստուգումներով՝ 18,571.5 հազ. դրամ, <<"Խոսրովի անտառ " պետական արգելոց>> ՊՈԱԿ-ի ստուգումներով՝ 5,170.0 հազ. դրամ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության ստուգումներով՝ 6,000.0 հազ. դրամ և այլն:

Միաժամանակ 2012թ առաջին եռամսյակում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հետ կայացած քննարկումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղը 2011թ կատարված ստուգման արդյունքներով արձանագրված խախտումների 43132.6 հազ. դրամ գումարից 34978.2 հազ. դրամը ենթակա չէ վերականգնման առաջադրման, քանի որ ստուգման ավարտից հետո

ՊԵԿ-ի կողմից ներկայացված լրացուցիչ տեղեկանքների համաձայն խախտումներ արձանագրված թվով 9 տնտեսավարող սուբյեկտների գծով ԱԱՀ-ի հետաձգված պարտավորությունները մարվել են սահմանված ժամկետներում (ստուգման ընթացքում նշված տեղեկատվությունը մաքսատանը առկա չի եղել): Բացի այդ ստուգմամբ 2008թ համար արձանագրված 4247.7 հազ. դրամի գանձման գծով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետի ընթացքում միջոցներ չեն ձեռնարկվել եւ ներկայումս՝ ստուգումը ավարտելուց հետո, <Հարկերի մասին > ՀՀ օրենքի 30/1 հոդվածի հիմքով, արձանագրված գումարը գանձման առաջադրել հնարավոր չէ, քանի որ խախտումը արձանագրվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող 3 տարին լրանալուց հետո:

IV. ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ իրավապահ մարմինների 2011թ. ներկայացված պահանջով իրականացված ստուգումներով արձանագրված գումարների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝ աղյուսակի տեսքով:

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԻՄՔԸ	Արձանագրվել է	Ենթակա է վերականգնման կամ վերաձևակերպման
	(հազ. դրամ)	
1	2	3
2011թ. պահանջ	71,839.6	71839.6

V. ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչության կողմից համապատասխան աշխատանքներ են տարվել ՀՀ Վարչապետի կողմից տրված հանձնարարականների պատշաճ կատարման ուղղությամբ: Այսպես.

- ՀՀ Վարչապետի 24.08.2011թ. թիվ 23.6/(87032)-11 հանձնարարականի հիման վրա “Առաքելություն Հայաստան” բարեգործական հասարակական կազմակերպությունում և “Հայաստանի կույրերի միավորում” հաշմանդամների հասարակական կազմակերպությունում իրականացվել է ՀՀ պետական բյուջեից գումարների հատկացման և ծախսման ճշտության ստուգում:

- ՀՀ Վարչապետի հանձնարարականներով երկու իրավաբանական անձանց մոտ իրականացվել են համալիր ստուգումներ, մեկ անձի մոտ իրականացվել է ծախսերի նախահաշվով նախատեսված հոդվածներով կատարված ծախսերի արժանահավատության ստուգում, մեկի մոտ՝ թեմատիկ ստուգում:

- ՀՀ Վարչապետի որոշումների հիման վրա ԱՊՀ տնտեսական դատարանում, ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի քարտուղարությունում , ԱՊՀ գործադիր կոմիտեի նստավայրում , հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության քարտուղարության և միացյալ շտաբում իրականացված ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների խմբերում ընդգրկվել են Տեսչության աշխատակիցները:

ՀՀ իրավապահ մարմինների պահանջով և ՀՀ Վարչապետի հանձնարարականներով կատարված ստուգումների արդյունքները ներկայացված են կից՝ հավելված 1-ում:

VI. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՕԳՏԻՆ ԲՌՆԱԳԱՆՁՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ԲՌՆԱԳՐԱՎՎԱԾ, ՀՕԳՈՒՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԻՐԱԶՈՒՐԿ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՆՑԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ ԴԱՀԿ ծառայություն) կողմից 2011թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի օգտին բռնագանձված ընդհանուր գումարը կազմում է **2,388,154.6 հազ. դրամ**, այդ թվում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գծով՝ 1,455,739.3 հազ. դրամ, ՀՀ դատախազության հայցերով՝ 343,163.5 հազ. դրամ, ՀՀ ֆինանսների նախարարության հայցերով՝ 8,920.3 հազ. դրամ, այլ բնույթի վարույթներով՝ 16,578.7 հազ. դրամ, վարչական տուգանքներով՝ 304,715.3 հազ. դրամ և այլն:

- ՀՀ կառավարության 18.02.2010թ. “Բռնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած նյութական ու դրամական արժեքներն օգտագործելու և դրանք հանձնելու, հաշվառելու և ոչնչացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 4-ի N 494 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” N 146-Ն որոշման համաձայն, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից յուրաքանչյուր եռամսյակ հաշվետվություն է ներկայացվում ՀՀ ֆինանսների նախարարություն՝ բռնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած նյութական ու դրամական արժեքների (այսուհետ՝ Գույք) իրացման վերաբերյալ:

- Ստորև ներկայացվում է 2011 թվականի ընթացքում ԴԱՀԿ ծառայության կողմից ներկայացված հաշվետվությունների ամփոփ պատկերը:

2011 թվականի ընթացքում ԴԱՀԿ ծառայության կողմից իրականացվել է ինչպես նախկինում, այնպես էլ հաշվետու տարում հարուցված ընդհանուր թվով 138 կատարողական վարույթ՝ տարբեր իրավասության դատարանների /Հյուսիսային

քրեական,Հարավային քրեական, Մալաթիա-Սեբաստյա, Կենտրոն և Նորք-Մարաշ , Շենգավիթ, Էրեբունի և Նուբարաշեն, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն,Աջափնյակ և Դավթաշենի վարչական շրջանների , Արարատի, Սյունիքի, Լոռու, Գեղարքունիքի, Տավուշի,Կոտայքի, Վայոց Ձորի, Շիրակի , Արմավիրի, Արագածոտնի մարզերի / կողմից կայացված դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթերով: Ընդ որում, բռնագրավվել, հօգուտ պետության տիրազուրկ է ճանաչվել և/կամ ժառանգության իրավունքով պետությանն է անցել ամենատարբեր գույք, այդ թվում՝ հագուստ, փոխադրամիջոցներ, հարդարման պարագաներ, տնտեսական ապրանքներ, բջջային հեռախոսներ, փայտանյութ, կենցաղային տեխնիկա, սննդամթերք, կահույք, դեղորայք, զենք, զինամթերք , ոսկի, թանկարժեք քարեր և այլն:

Իրականացված ընդհանուր թվով 138 կատարողական վարույթներից հաշվետու տարում ավարտվել է թվով 100-ը, որից թվով 46 կատարողական վարույթով Գույքը վաճառվել է և իրացումից ստացված հասույթը փոխանցվել է պետական բյուջե,

- թվով 1 կատարողական վարույթ ավարտվել է համաձայն ‘ԴԱՀԿ մասին’ ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ կետի, նկատի ունենալով, որ ապրանքները ժամկետանց են և իրացման համար ոչ պիտանի,
- թվով 1 կատարողական վարույթ ավարտվել է համաձայն ‘ԴԱՀԿ մասին’ ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի,այն է՝ գույքային բնույթի կատարողական վարույթով կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է դարձել դատական ակտերի կատարումը:
- թվով 25 կատարողական վարույթ ավարտվել է համաձայն ‘ԴԱՀԿ մասին’ ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի, այն է՝ պահանջատերերը դիմում են ներկայացրել կատարողական թերթը վերադարձնելու մասին:
- թվով 27 կատարողական վարույթ կարճվել է Գույքը համապատասխան մարմիններին / ՀՀ ոստիկանություն, ՀՀ ԿԱ ՊԳԿՎ , “Մարդասիրական օգնություն հանրապետական կենտրոն”ՊՈԱԿ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ

պաշտպանության նախարարություն, ՀՀ ԿԱ ՊԵԿ,"ՎՀԿ"ՍՊԸ/ հանձնելու հիմքով:

2011 թվականին ընթացքում իրականացված վերը նշված կատարողական վարույթների արդյունքում հաշվետու տարվա վերջում պետությանն անցած գույքի մնացորդի ընդհանուր արժեքը կազմել է ***98,113.8*** հազ. դրամ, կատարողական գործողությունների ծախսերը՝ ***415.5*** հազ. դրամ, պետական բյուջե փաստացի փոխանցված գումարը՝ ***9,642.6*** հազ. դրամ:

2011 թվականի արդյունքներն ամփոփելով, նշենք, որ բյուջեի կատարման հսկողության ընթացքում Տեսչության կողմից բացահայտված ռիսկերը վերահսկվող մարմինների անարդյունավետ կառավարման և թույլ հսկողության հետևանքով թույլ տրվող խախտումների ու թերությունների արդյունք են:

Խախտումների և թերությունների վերացմանն ու ռիսկերի հետագա զսպմանն ուղղված համապատասխան առաջարկություններով յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո ստուգված կազմակերպություն և/կամ պատկան վերադաս մարմին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գրություններ են հասցեագրվել և հսկողություն է իրականացվել վերջիններիս կողմից ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ:

Պատասխանատու մարմինների կողմից խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ պարբերաբար ստացվող տեղեկատվության համաձայն՝ համապատասխան պաշտոնատար անձանց տրվել են հանձնարարականներ, առանձին դեպքերում՝ խախտում թույլ տված անձինք ենթարկվել են պատասխանատվության, արձանագրված գումարային խախտումների վերականգնման նպատակով կազմվել են ժամանակացույցեր, ներկայացվել են փաստացի վերականգնված գումարները հիմնավորող փաստաթղթերը: